ԲԱԺԱՆՈՒՄԻ ՆՈՐ ՔԱՅԼ ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

Խոր ցաւով եւ հիասթափութեամբ Գանատահայոց Թեմական Խորհուրդս կ'անդրադառնայ, որ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը «Առաջնորդի» փիփղոս շնորհած է Խաժակ արքեպս. Յակոբեանին, որը պարզապէս վաւերացումն է անցեալին տեղ գտած բաժանումին եւ պառակտումին: Յաւ կը յայտնենք, որ սոյն քայլը աւելի կը խորացնէ պարտադրուած պառակտումը եւ բաժանումը մեր գաղութի մէջ, որու համար եւ խստօրէն կը դատապարտենք մինչեւ այժմ գաղութիս բաժանման ուղղութեամբ ձեռնարկուած բոլոր քայլերը՝ ներառեալ, այսպէս կոչուած, «Թեմի» հռչակումը 2001 թուականին:

Դժբախտաբար, կարգ մը սփիւռքահայ գաղութներու նման, գանատահայութիւնը եւս զերծ չմնաց եկեղեցական եւ համայնքային անբաղձալի երկուութիւններէ եւ պառակտումէ: Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկ 1898 թուականի Հայրապետական Սրբատառ Կոնդակով հաստատած է Հիւսիսային Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ թեմը (ներառեալ Գանատահայոց թեմը) Էջմիածնի Գերագոյն Իշխանութեան ենթակայ: Գանատայի մէջ առաջին Հայ Առաքելական եկեղեցին պաշտօնապէս հաստատուեցաւ 1930-ին՝ Մէնթ Քէթրինզի մէջ, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի անուամբ, հովանաւորութեամբ եւ օրհնութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան: Նոյնպէս Մոնթրէալի մէջ, առաջին հայկական եկեղեցին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչը, իսկ Թորոնթոյի մէջ՝ Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական եկեղեցին, առաջինը այդ քաղաքին մէջ հաստատուեցաւ 1953-ին: 1984-ին ընդառաջելով գանատահայոց եկեղեցիներու փափաքին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Հոգեւոյս Վազգէն Ա Հայրապետական Կոնդակով հռչակեց ստեղծումը Գանատահայոց Առաջնորդութեան, մինչ սկսած էր բազմանալ մեր Եկեղեցիներու ցանցը այս փարածուն երկրի փարբեր հայաշատ քաղաքներուն մէջ: Այս բոլորը կատարուեցան հիմնուած օրինական եւ մեր Եկեղեցւոյ կանոններու եւ աւանդութիւններու փրամադրութեանց վրայ: Արդ, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ենթակայութենէն դուրս Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմտեան, ինչպէս նաեւ Գանատայի հայոց թեմերու իրաւասութենէն դուրս կազմուած որեւէ Հայաստանեայց եկեղեցի մը եւ կամ առանձին բաժանեալ թեմական վիճակ մը հակականոնական եւ հակաօրինական է:

Փաստօրէն, մանաւանդ այս օրերուն, երբ առաւել կարիքն ունինք միաբանութեան եւ սիրոյ, ցաւ ի սիրտ դարձեալ պիտի ճաշակենք բաժանումի դառնութեան բաժակէն: Մեզ համար անհասկնալի է նպատակի հետապնդումը, որ կը նշանակէ չհասկնալ ժամանակի նշանները: Այն յատկապէս այս ափերու վրայ նոր սերունդի մէջ հիասթափութիւն եւ անհանդուրժողութիւն յառաջ պիտի բերէ հանդէպ մեր Սուրբ Եկեղեցին եւ ազգային գիտակցութիւնը՝ պատճառ ըլլալով անոնցմէ հեռացումի: Այս իրավիճակի յառաջացման ամբողջ պատասխանատուութիւնը կը մնայ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վրայ: Դատապարտելով հանդերձ կատարուածը, մենք կը մնանք միշտ միաբանութեան եւ սիրոյ պահպանումի դիր-

քին եւ կը յուսանք, որ այդքան փափաքելի միաբանութիւնը կը վերահաստատուի մեր ժողովուրդի կեանքէն ներս գործնականօրէն:

Կ'աղօթենք, որպէսզի Բարին Աստուած խաղաղութեան ու սիրոյ մէջ պահէ մեր տառապեալ Եկեղեցին եւ ժողովուրդը՝ անվնաս եւ ապահով առաջնորդելով դժուարին հանգրուաններու մէջէն:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ

12 Մարտ, 2004